№ 71 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 29 1908 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 29 № 71

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Ծայրաբարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Ծայրաբարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Վաղը՝ կիրակի, մարտի 30-ին, առաւօտեան ժամը 12-ին
Հասարակական դրադարանի դահլիճում (պալատի դիմաց)
նշանակված է
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Խորհրդի և խմբագրական մասնաժողովի զեկուցումը՝ ընկերութեան գործունէութեան մասին։
2) 1906 և 1907 թուականների հաշիւը։
3) 1907 թ. նախահաշիւը։
4) Ընկերութեան նոր ճիւղեր բանալու խնդիրը։
5) Պրոֆ. Մարբին ընկերութեան պատուաւոր անդամ ընտրելու խնդիրը։
6) Ընտրութիւն խորհրդի երկու անդամի և երկու փոխանդամի և խմբագրական մասնաժողովի երկու անդամի և 3 փոխանդամի։

Նախագահ՝ Ա. Մելիք-Աղաբեանց

Ծանօթ.— Ընկերութեան ճիւղերի անդամները ևս հրաւիրվում են մասնակցելու, ձայնի հաւասար իրաւունքով։ 1—1

Հայկանոյշ Յակոբեան և Գաբրիէլ Մելիք-Մարութեան խորին վշտով յայտնելով իրանց ազգականներին և ծանօթներին, առաջինը իր թանգագին եղբօր, երկրորդը իր սիրելի աներորդու՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

ողբերգական և վաղաժամ մահը, խնդրում են շնորհ բերել թաղման, որ տեղի կունենայ կիրակի, մարտի 30-ին, առաւօտեան ժամը 10-ից, հանգուցեալի բնակարանից (Բեբուտովսկայա և Մօզինինսկայա փող. անկիւն, տուն Առաքելեանցի, № 11) դէպի Նորաշէնի եկեղեցին։

Բեմիրխանի ս. Աստուածածնի եկեղեցու միաբանութիւնը և Երէցփոխանը յայտնում են ծիսականներին նոյն եկեղեցու տիրան

Գրիգոր աւագ քահ. ՏԷՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆՑԻ

մահը, որի թաղումը կը տեղաւորվի այսօր, երեկոյեան ժամը 4-ին, իր սեփական բնակարանից (Բեբուտովսկայի փողոց № 11) Աղոնու ս. Գէորգ եկեղեցին, իսկ թաղումը կիրակի, մարտի 30-ին, Մօշիվանքի գերեզմանատունը։

Կովկասեան Հայոց Քարեգործական Ընկերութեան խորհուրդը յայտնում է, որ այսօր ժամը 11-ին Մոդնու եկեղեցում, պատարագից յետոյ, լինելու է հանգուցեալ բարերար

ՅՈՀԱՆՆԷՍ ԹՈՒԴԱԴԵԱՆԻ

Հոգեհանդիստը։

Յակոբ Մանուէլեան, Սոֆիա Առաքելեան, Սոֆիա Մանուէլեան և Երուանդ Յակոբեան Մանուէլեանցները, Ատեփան Մկրտուչեան և Լիւսի Մանուէլեան եարդուլեանցները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինների թանգագին որդու, չորրորդի եղբօր, երրորդի և վերջինի եղբօրորդու և հինգերորդի անբորոտի Թիֆլիսի Ռեալական դպրոցի IV դասատան աշակերտ

ԱՆԴՐԱՆԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

ողբերգական մահվան մասին

Հոգեհանգիստը տեղի կունենայ հանգուցեալի բնակարանում (Բեբուտովսկայա և Մօզինինսկայա փողոց. անկիւն, տ. Առաքելովի № 11) մարտի 29-ին, երեկոյեան ժամը 6½-ին, իսկ յուղարկաւորութիւնը կիրակի, մարտի 30-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Նորաշէնի եկեղեցին և աճատեղից Մօշիվանքի գերեզմանատունը։
(ու. շ.) 2—2

Գ. Ֆ. Ամիրեանցի անվան գրադարանի կանոնաւոր ընթերցումները սկսվում են մարտի 30-ին։

Նախագահ՝ Ս. Ալիխանեան
Քարտուղար՝ Ա. Ղազարեան
Գանձապետ՝ Ս. Ասլանեան
Գրադարանապետ՝ Ս. Ասլանեան
Գրադարանի հանձնակատար՝ Ս. Ասլանեան
Գրադարանի հանձնակատարի օգնական

նարարէ նոյնպէս, քանի որ մակեդոնական բիւզէնդէն վրայ եղած յաւելումը անբաւական է ներկայ թիւրքական գունդերուն պէտքերը հոգալու,—որոնք իբր թէ կարգը կը պահպանեն,—այդ գունդերու թիւը նուազեցնելը։ Այժմ վերոյիշեալ սպիտակ թուղթէն կը տեղեկանանք, թէ պիտութիւնները մերժած են սոյն առաջարկները՝ օգնականելու անկարողութիւնին յայտնելով։ Կը տեսնենք հոն նաև այն գրութիւնները, որ Անգլիոյ արտաքին գործոց մինիստրութիւնը ուղղած է առանձնապէս իր դեսպան մայրաքաղաքներու հիւպատոսներուն։

«Ն. վ. կառավարութիւնը մեծ ցաւով ստացաւ այս հաղորդագրութիւնները։ Ան հիմնովին կընդունի գործնական միջոցներ գտնելու դժուարութիւնը՝ Մակեդոնիոյ ողբալի կացութեան վերջ մը դնելու համար, որ խումբերու մշտական գործունէութիւնը յառաջ է բերած և թիւրք իշխանութիւնները կրցած չեն ազդու կերպով շարժիլ։ Ուստի, միայն ծանր նկատողութենէ վերջ, և իր վրայ ծանրացած բարոյական պատասխանատուութեան հղօր գիտակցութիւնով է որ, միւս պետութեանց հետ միասին, բնակչութեան զրկանքները ամոքելու ճիգով և եւրոպական խաղաղութեան վտանգէն խոյս տալու սիրոյն, որ կրնայ յառաջանալ շնորհիւ ներկայ կացութեան, նորին վեհափառութեան կառավարութիւնը ըրաւ այդ թելադրումները, որ, իր հայեցակէտով, սահմանուած էր կարգը վերահաստատել և կեանքի ու ինչքի ապահովութիւն տալ։ Հետևաբար, կարելի չէ իր յուսաղրկման զգացումը չյայտնել, քանի որ առաջարկը այդպիսի անհաճոյ ընդունելութեան մէջ է հանդիպած և նոր փոխադարձ առաջարկ մը ևս չկայ՝ դրութիւնը բարւոքելու, որ հրամայականօրէն անմիջական ու եռանդուն գործունէութեան կը կարօտի»։

Իսկ պետութեանց այն առարկութեան, թէ՝ «բոպէն պատեհաւոր չէ» գործելու, անգլիական մինիստրը կը պատասխանէ, որ «մանաւոր պատեհաւոր բոպէի սպասել գործելու համար՝ պիտի նշանակէ ներկայ տիրող անիշխան կացութեան անորոշ շարունակումը», ու կը մատնանշէ Բերլինի դաշնագրութիւնը սորագրող պետութեանց «ծանր բարոյական պատասխանատուութիւնը՝ եթէ թոյլատրեն, որ արդի ողբալի վիճակը դեռ շարունակուի»։

Գալով հակառակ բէֆորմներու, այսինքն քաղաքական աջէնթներու և ֆինանսական գործակատարներու իրաւանց վերանորոգման, ինչպէս նաև դատական գործոց բարեփոխման, թերևս ատոնք մասամբ մեղմացնեն թիւրք վարչական դառնութիւնը, «բայց,—կաւելացնէ պաշտօնական թուղթը,—կարող չեն երկիրը խաղաղել և չարիքները նուազեցնել, ոչ ալ կասեցնել սպանութիւն և բռնաբարում»։

«Սոյն Մակեդոնիոյ հարցով զբաղուած պահուն Ն. վ. կառավարութիւնը զրդուած չէ երբէք քաղաքական շարժառիթներէ, այլ լոկ պատասխանատուութենէն արձակուելու փափաքէ մը, որ կը զգայ թէ կը ծանրանայ վրան՝ միւս պետութեանց հետ միասին՝ որ ստորագրեցին Բերլինի դաշնագրութիւնը, և մանաւանդ արձակուելու այն պարտաւորութիւններէն՝ որոնց ենթարկուած է յիշեալ դաշնագրութեան XXIII յօդուածով, կրցածը չինայելու՝ ըէֆորմներ մտցնելու համար։ Ան կը զգայ, թէ այս մշտական չարիքները թիւրքական կայսրութեան մէջ՝ ի վերջոյ թուլութեան և վտանգի աղբիւրը պիտի հանդիսանան թիւրք կառավարութեան, և վտանգ մը նաև խաղաղութեան։ Ան (անգլ. կառավարութիւնը) կուզէ, մարդկութեան և քաղաքական անդորրութեան շահուն, կրցածը ընել՝ այս չարիքները բառնալու։ Ան կը զգայ, թէ այժմ որ դրութիւնը ճգնաժամային աստիճանին է հասած, ժամանակ է, որ պետութիւններ միահամուռ և լիովին գործեն։ Դրութիւնը անքուժելի չէ, սակայն կարիւր չէ կէս մէջոցներով բուժել»։ Ապա, այն միտքը կը կրկնուի թէ, եթէ կառավարիչ մը նշանակուի լիազօր ոյժով, երկիրը շուտով կը խաղաղի։ Ու կը վերջանայ։

«Ն. վ. Յկառավարութիւնը չի կրնար ընդունիլ այն հանգամանքը՝ թէ սոյն առաջարկները Պոլիս չդրուելուն պատճառով թիւրք կառավարութիւնը առարկութիւններ պիտի յարուցանէ։ Ամէն առաջարկ, մեծ թէ փոքր, մինչև այսօր միշտ առարկութեանց հանդիպած է Պոլսոյ մէջ, և եթէ ընդունինք թէ սոյն հանգամանքը անընկճելի խոչընդոտ մըն է, այն ատեն դա ճակատագրական է նաև ապագայ ոևէ առաջարկի։ Ն. վ. կառավարութիւնը կը հաւատայ թէ, եթէ պետութիւններ հաւատարապէս լուրջ ու հաստատակամ են՝ կրնան ապահովել ընդունելութիւնը սեպ առաջարկի, որ օթոման հողերու անջատման հետ գործ մը չունի։ Եթէ, միւս կողմանէ, պետութիւններ պատրաստ չեն այս ընթացքը բռնելու, յայնժամ պարզապէս պէտք է յայտարարել, թէ անկարելի է տիրանալ ոևէ բանի, և թէ կօնսերթը, ըէֆորմներ ձեռք բերելու գործիք մը, դադրած է գոյութիւն ունենալէ,—եզրակացութիւն մը՝ որուն համար Ն. վ. կառավարութիւնը խիստ անկեղծօրէն կը ցաւի և որմէ կը փափաքի հեռու մնալ»։

Ահա ատոնք են իրենց ածքողութեան մէջ անգլիական կառավարութեան գործունէութեան ամփոփումները վերջին 3—4 ամսուայ ընթացքին։ Դեռևս յուսալիր, արտաքին գործոց մինիստրը, տեղի չտալով սոյն առաջին մերժման, նոր ճիգ մըն է փորձած մարտի 3-ին նոր պաշտօնագիր մը ղրկելով, որու պատասխանը տակաւին յայտնի չէ պաշտօնապէս, բայց Բիլլովի Վիէննա այցելութիւնը և շուտով իր Տիտօնիի հետ տեսակցութիւնը, ըստ ոմանց, պարզօրէն կապացուցանեն թէ երկրորդ պատասխանն ալ առաջնոյն նման պիտի լինի։ Առաջարկին ամենէ հզօր թշնամիներն են Աւստրիա և Ռուսաստան, և իրենց ջանքն է շահիլ նոյնպէս Իտալիոյ և Գերմանիոյ ալակցութիւնը, որ անտարակուսելի զէպք մը չէ։

Մխանգամայն, մամուլը օրէ օր կը յուղէ խնդիրը։

Վերոյիշեալ սպիտակ թուղթին երևումը հիասթափեցուցիչ բան մըն էր տեղւոյս մամուլին։ Անոնք որ, գլխաւորապէս ազատական-արմատականներ, մինչև օրս պախարակած էին արտաքին գործոց մինիստրը անգործութեան համար, հիացումի շեշտեր արձակել սկսան, մինչ պահպանողական մամուլի սթափումը ապշեցուցիչ էր։ Բնաւ չէին խոհիր թէ Գրէյ անգլիական կառավարութիւնը այնքան պիտի «սորոնցնէր» մերժում և պարտութիւն կրելիք առաջարկ մը զլորելով։

Այսուհանդերձ, կարծիքները առհասարակ նպաստաւոր են, և «Թայմզ» իսկ համակրանք կարտայայտէ նոր կառավարիչ նշանակելու առաջադրութեան՝ իբրև միակ ելքը այս անտանելի կացութեան։ Աւելին կայ։ Հիացումով կողջունէ Գրէյի ձեռնարկը և փափաք կը յայտնէ, որ միւս պետութիւններ ևս չմերժեն զայն։

Իսկ տեղական բալկանեան կոմիտէն հրճուած է։ Քարտուղարը, տեսակցութեան մը ընթացքին, կըսէր թէ անգլիական կառավարութեան առաջարկը իրենց տարիներէ ի վեր քարոզած միջոցն է, և հպարտութիւնով կը խոստովանէր որ՝ Բալէրմոյի հռչակաւոր գրութենէն ի վեր՝ որով Գարիբալդիի բարեկամութիւն կը ծանուցնէր՝ ոչ մէկ անգլիական մինիստր այսպիսի յանդուգն և խրոխտ հաղորդագրութիւն մը ուղղած էր օտար պետութեանց։ «Իսկ անոնք որ,—կաւելցնէր,—կը կարծեն թէ սրը Էդուարդ Գրէյ պիտի դիւրաւ տեղի տայ այս առաջարկի իրագործումէն առաջ, բոլորովին պիտի զարմանան հակառակը տեսնելով»։

Ցիրաւի, ինչպէս արդէն յիշեցի, արտաքին գործոց մինիստրին այս ընթացքը բացարձակ յայտնութիւն մըն էր բոլորին, դատելով զինքը իր հրապարակաւ տուած նախկին բացատրութիւններէն։

Միևնոյն ժամանակ «Թայմզի» Սոֆիայի ժամանակաւոր թղթակիցը կը հաղորդէ, որ մակեդոնական դանդան կուսակցութիւններ հաւաքուած են բուլգար-մակեդոնական սահմանագլխին վրայ անծանօթ վայր մը՝ իրենց առաջնորդ մը ընտրելու՝ Սարաֆովի և Դարվանովի փոխարէն և իրենց գործունէութեան նոր ծրագիրը կազմելու։ Իսկ նէութեան նոր ծրագիրը Սանդանակի, որու ճիւղային ոճիրին վրայ տարակոյս սնդան չկայ հիմա, քանի-քանի նամակներ է ուղղած յիշեալ գումարման՝ զղջում յայտնելով և խնդրելով ինք ևս միանալ անոնց, բայց առաջարկները անպատասխանի են մնացած։ Կը յուսացուի թէ անձամբ ներկայանայ, մինչդեռ այդ պարագային ալ վախ կայ վրէժխնդրական գործի։

Այսպէս, ուրեմն, մակեդոնական խնդիրը անգամ մը ևս ծօտաւոր յուզման հրատապ շրջանի մը նշանները կը ցուցնէ։

Կարժէ համբերել և տեսնել, թէ այս անգամ ի՞նչ վախճանի պիտի յանգի,—զուտ՝ ողբերգութեան թէ՞ անկեղծ ուլուրջ լուծման՝ այս յաւիտենական դատին։

Մինաս Ցոլակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԹՈՎ

—

Մարտի 27-ի երեկոյեան ժամը 8-ին Թիֆլիսի բօրսային դահլիճում տեղի ունեցաւ կաթողիկոսական խնդրի առիթով հրաւիրված ժողովի խորհրդակցութիւնը, որին՝ ընտրութեան կողմակիցներից բացի՝ մասնակցում էին նաև ոչ հրաւիրված հարկառակ հոսանքի խմբից անդամներ։ Կային մի քանի հիւրեր ևս զանազան քաղաքներից։

Ներկայ ժողովը իր նախորդի չափ բազմամարդ չէր։

Ս. Յարութիւնեան, նիստը բանալով, առաջարկում է ընտրել մի նախագահ ժողովը կառավարելու համար։ Ժողովականներդովը կառավարելու համար։ Ժողովականները՝ խնդրանքը շարունակում է նախագահելի։

Նախորդ ժողովի («Մշակ» № 68) զեկուցումների մասին համառօտ ծանօթութիւն տալուց յետոյ, նախագահը անցաւ հերթական ժողովի օրակարգին. 1) որ ներկայ յանձնաժողովը հաստատի իբրև ժամանակաւոր բիւրօ ընտրութիւնների վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքելու և տալու համար, 2) հարկաւոր պահանջները մշակէ և ներկայացնէ ապագայ հաստատումարին, 3) կաթողիկոսական ընտրութեան առիթով (վիճակների և թեմերի պատուիրակների մասին) սահմանված ժամանակաւոր անարդար կանոնները փոփոխելու մասին հարց դրութեան դնել սենեակի առաջ և 4) համագումար հրաւիրելու հարցը, որ տեղի ունենայ ոչ ուշ, քան մինչև մայիսի 1-ը։ Այնուհետև նախագահի առաջարկութեամբ ժողովականներից ոմանք ցանկութիւն են յայտնում լսել Լէօի անցեալ պատմական տեսութեան համառօտ և ամփոփ եզրակացութիւնը կաթողիկոսի ոչ միայն կրօնական, այլ և քաղաքական և կուլտուրական դերի մասին։ Եւ Լէօն կրկնում է իր տեսութեան վերջին նորագոյն շրջանը։ Դրանից յետոյ նախագահը յայտնում է, որ պիտի կարդացվեն երկու համառօտ զեկուցումներ ևս, և խօսքը տալիս է Հ. Առաքելեանին։ Վերջինս ասում է.—Տարակոյս չը կայ, որ կաթողիկոսական հարցը կարօտ է լուսաբանութեան։ Մեզանում մի հոսանք նոյնիսկ քարոզում էր, որ չարժէ ուշադրութիւն դարձնել այդ բանի վրա, իսկ նրանք, որոնք կողմակից են ընտրութեան, ստիպված են մաքառել այդ հոսանքի դէմ։ Ահա դրա հետևանքն է այս դասախօսութիւնը, բեֆերատները, յանձնաժողովը և այլն։ Բայց մենք հայերս առհասարակ միշտ ծայրայեղութիւնների մէջ ենք ընկնում։ Լսեցինք Լէօի դասախօսութիւնը, որտեղ նա կաթողիկոսի եկեղեցական նշանակութեան հետ միասին ապացուցանում էր և՛ քաղաքականը, և՛ կուլտուրականը։ Ահարոնեանը շեշտեց կաթողիկոսի գլխաւորապէս քաղաքական և մասամբ էլ կուլտուրական ֆունկցիաները, բայց ոչ եկեղեցական։ (Նախագահը նկատում է, որ Ահարոնեանն այդպէս չասաց. սխալ է ըմբռնել)։

Շառախօսը շարունակում է.—Ես այդ եզրակացութիւնը արեցի և դա, իմ կարծիքով, սխալ է։ Ցոյց տալու համար, որ թէ ուսաց և թէ օտար պետութիւնները այդ նշանակութիւնը չեն տալիս կաթողիկոսին, ես ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ հետևեալ հանգամանքի վրա։ 1882 թ-ից ի վեր, Գէորգ կաթողիկոսի մահից յետոյ, կառավարութիւնը, իր վերաբերմունքը դէպի կաթողիկոսը որոշելու համար, առաջարկեց բարձր Նիկոլային տեղեկագիր ներկայացնել այդ մասին, և ապա մինիստրների խորհրդի մէջ պարզվեց այդ որոշումը։

Ապա ճառախօսը կարդալով այդ տեղեկագրի էական կէտերը նոր կաթողիկոսի ընտրութեան առիթով, յիշեցրեց Մատթէոսի ընտրութեան օրինակը, եզրափակում է.

«Առաջ բերելով այդ կէտերը, ես ուզում էի մատնանշել, որ միմիայն քաղաքական ֆունկցիա տալ կաթողիկոսին սխալ է. եկեղեցին առանց դրան էլ կը պահպանի իր հոգևոր, բարոյական և մտաւոր ազդեցութիւնը»։

Յ. Թումանեան ուզում է ուղղել Առաքելեանի տուած սխալ բացատրութիւնը Ահարոնեանի ասածների նկատմամբ։ Նախագահը նկատում է, որ ինքը ուղղեց այդ սխալը։

Լեոն առարկում է Առաքելեանին, որ ինքն էլ ծանօթ էր բարձր Նիկոլայի գրութիւնների հետ, բայց նրանք ոչ մի արժէք չունեն։

Նախագահը յայտնում է, որ Ա. Քալանթարը կը խօսէ կաթողիկոսական ֆունկցիաների մասին։

Ա. Քալանթար.—Իմ նպատակն է նշանակել մի քանի կէտեր, որոնք հանդէս են եկել և նշանակութիւն ունեն մեզ համար։ Մօտ 100 տարի է, որ ռուսական տիրապետութեան ներքոյ ենք, միշտ էլ ունեցել ենք կուլտուրական և հոգևոր խնդիրներ, սակայն մեր օրերում շատ հարցեր են ծագել, որոնք պէտք է ընթացք ստանան նոր կաթողիկոսի օրով, օրինակ՝ վարչական, դպրոցական, եկեղեցական, քաղաքական, տնտեսական և այլն։

Նախ կանգ է առնում վարչական ու տնտեսական հարցերի վրա, ապա անցնում է դպրոցական հարցին, թուում է թեմական տեսչի, կենտրոնական ուսուցչական, կենտրոնական թեմական, դպրոցական ֆոնդի, ուսուցչական կենսաթոշակի, կուլտուրական բարեկարգութեան, մէլիորացիայի, հողերի յետ գնման և այլ խնդիրները։ Մատնանշում է մի շարք ուրիշ այժմէական խնդիրներ ևս, ինչպէս օրինակ՝ ամուսնական, չափաբերական, էջմիածինը իբրև հայագիտութեան կենտրոններից մէկը, իբրև Թանգարան, կաթողիկոսի ներկայացուցչութեան իրաւունքը, Ռուսաստանի թեմերի աւելացման, արտասահմանում նոր թեմեր հաստատելու, հայութեան գաղթավայրերում պատուիրակութեան հարցը, հայերի մասին էջմիածնի դիւանում տեղեկագիրներ հաւաքելու մասին և այլն։

Մանաւանդ մեր առաջ կանգնած է նաև թիւրքահայերի հարցը, որ կարող է նորից սուր կերպարանք ստանալ, և կաթողիկոսը կարող է դեր խաղալ։ Ժողովրդի տրամադրութիւնը մեծ նշանակութիւն ունի և կաթողիկոսը պէտք է կարողանայ ըմբռնել։ Ահա այդ խնդիրները առաջ են եկել. հարկաւոր է, որ մի կողմից ժողովրդական ներկայացուցիչները մշակեն նրանց ու պատրաստեն կաթողիկոսի համար, իսկ միւս կողմից՝ ունենալ այնպիսի կաթողիկոս, որ կարողանար ըմբռնել այդ հարցերը և ժողովրդական ներկայացուցիչների հետ միասին իրագործել ձգտէր։ Ժամանակը նոր պահանջներ է զարթեցնում, և պէտք է նրանք բաւարարութիւն ստանան (ծափահարութիւններ)։

Թ. Բաբայեան ըստ կարգի խօսք է խնդրում և Ա. Քալանթարի ասածների վրա ուսումնասիրելացնում է նաև ընդհանուր հայութեան համարատուութիւնը կազմելու հարցը։

Նախագահը և այս ու այն կողմից նրան նկատում են, որ այդ հարցը յիշեց Քալանթարը։

Այնուհետև ցուցակագրվում են ճառախօսները։

Նախագահը նորից յիշեցնում է կաթողիկոսական ընտրութեանը նշանակութիւն չը տուող ճառախօսներին յանձնաժողովի որոշումը։

Ներկայ եղողներից ոմանք բողոքում են այդ որոշման դէմ։

Առաջարկվում է խօսելու ժամանակը սահմանափակել 10 րոպէով։

(Կը շարունակվի)

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—

Վաղը, կիրակի, մարտի 30-ին, նշանակված է հայոց ազգագրական ընկերութեան ընդհանուր ժողովը։

Այս ընկերութիւնը գործում է մեր մէջ մի քանի տարիներից ի վեր և ծառայում է զուտ գիտութեան, մի գիտութիւն, որ կարևոր է և հետաքրքրական թէ համաշխարհային և թէ ազգային քաղաքակրթութեան տեսակէտից։

Մեր մէջ բաւական թուով ընկերութիւններ կան և նրանցից մի քանիսը ծաղկում են. բայց զուտ գիտական ընկերութիւն, որ բացառապէս նուիրված լինի գիտութեան շահերին, մենք միայն մի հատը ունենք, այն է ազգագրական ընկերութիւնը։ Վերջին ժամանակներս ազգագրական և հնագիտական գիտութիւնները, շնորհիւ պեղումների, առանձին նշանակութիւն ստացան քաղաքակիրթ աշխարհում. այդ գիտութիւնները և նրանց վերաբերեալ պեղումները մի ամբողջ յեղափոխութիւն մտցրին պատմութեան, մանաւանդ Արևելքի հին-պատմութեան ուսումնասիրութեան մէջ։

Հայոց հին պատմութիւնը, որ մինչև այսօր մնում է իր լեգենդային շրջանում, անկասկած, ենթարկվելու է նոյնպէս ամենամեծ յեղաշրջման՝ շնորհիւ պեղումների, շնորհիւ ազգագրական և հնագիտական գիտութիւնների։ Մենք փորձով տեսանք, որ պրոֆեսոր Մարրի Անիում կատարած պեղումները ինչ ահագին յեղաշրջումն առաջ բերին մեր գաղափարների մէջ հայոց պատմութեան Բագրատունեաց շրջանին վերաբերեալ։

Բայց այն, ինչ որ կարող է անել մի ընկերութիւն, անհատը չէ կարող, ուստի և անհրաժեշտ է, որ մենք հնարաւորութեան չափով աջակցենք, օգնենք այն ընկերութեան, որ այսօր մեր մէջ միակն է հանդիսանում այդ ասպարիզում։ Եւ մանաւանդ այժմ, երբ այդ ընկերութիւնն որոշել է հրատել ազգագրական-հնագիտական բանգարան, ուր պէտք է հաւաքվեն մեր երկրին և Հայաստանին վերաբերեալ ազգագրական-հնագիտական իրեր, և մարդաբանական-կովկասագիտական գրադարան։

Այդպիսի մի թանգարանի և մատենադարանի գոյութիւնը անհրաժեշտ է և անչափ տաճգելի, ուստի և հայ հասարակութեան վրա բարոյական պարտաւորութիւն կայ՝ ամէն կերպ աջակցել ընկերութեան, որ նա կարողանայ իրագործել իր գեղեցիկ և օգտակար միտքը։

Հ. Ա.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Հայոց թատրոնական լեկերտուարը հարստացաւ էլի մի նոր պատմական պիէսով, որ ներկայացվեց ասիս 27-ին արտիստական թատրոնում։ Այդ պիէսն է Բ. Այվազեանի «Անիի կործանումը»։

Չենք կարող ասել, թէ «Անիի կործանումը» մի որևէ բանով տարբերվում է մեր մինչև օրս եղած պատմական պիէսներից։ Նոյն «ախ Հայաստան» ու «վախ Հայաստանը», նոյն «դաւաճան» և «հայրենասէր» իշխանները, նոյն անտեղի պոռոտախօսութիւնները և ուրիշ ոչինչ։ Միակ աչքի ընկնող հանգամանքը, որով, կարելի է ասել, «Անիի կործանումը» տարբերվում է իր նման պատմական պիէսներից, այն է, որ այստեղ, զուտ հակառակ հեղինակի կամքի, դաւաճան Վիստ-Սմբատ իշխանը շատ աւելի լուսափոխ, քաղաքակրթութեան կողմնակից է դուրս բերված, քան հայրենասէր կից է դուրս բերված, քան հայրենասէր Պահլաւունի իշխանը, որը սարսափում է յունական տիրապետութիւնից գլխաւորապէս հէնց նրա համար, որ յոյները զեղխ, շռայլ ու անբարոյական կեանք կը մտցնեն Հայաստան և կասկանեն հայի նահապետական կեանքը. կարծես թէ պարսիկներն ու շարունակ նրանց կուլտուրայով ապրող նահապետական հայերը շատ աւելի մաքուր կեանք ունէին, քան յոյները։

Բ. Այվազեանը, կամենալով փաստաբանի կերպով ապացուցանել, որ յոյները անբարոյականութիւն էին մտցնում Հայաստան, իր պիէսի 4-րդ գործողութեան մէջ ցոյց է տալիս, թէ ինչպէս յոյն զօրապետը Անին գրաւելուց անմիջապէս յետոյ, սկսում է հարբեցողութեան տրվել և աղջիկներ է պարեցնել տալիս, որոնց, պէտք է ենթադրել, նա իր բանակի հետ Պոլսից էր բերել Հայաստան...

Ներկայ հայկական ժամանակի համար մի շատ բնորոշ դրամատիկան կէտ էլ կայ «Անիի կործանումը» պիէսի մէջ. այդ այն է, որ նման պատմական պիէսներից, այն է,

ղան, իսկ երբ տղայի կողմից աղջկայ հօր կամ եղբօր դրամական պահանջին լրիւ բաւականութիւն տրվում է՝ հաշտութիւնը շատ հեշտ է լինում։

Անբարոյականութիւնը, բարքերի վատթարացումը այնքան խոր արմատներ է այլասերումը այնքան խոր արմատներ է ձգել ընդհանրապէս բոլոր համշէնցիների և մասնաւորապէս Զուբկայի շրջանի հայ գիւղացիների մէջ, որ նրանց առօրեայ բոլոր խօսակցութիւնների նիւթը, թէ դրսում և թէ ընտանեկան յարկերի տակ, այն է, թէ ո՞ր հարսը կամ աղջիկը ո՞ր տղամարդու հետ ծածուկ յարաբերութեան մէջ է, թէ նրանց միջնորդները ովքե՞ր են և ի՞նչ վարձատրութիւն են ստանում, և այլ հազար ու մի այսպիսի բաներ։ Նրանց թէ արական և թէ իգական սեռի ամէն մի խօսքի հետ անբաժան է իր միջավայի ամենակոպիտ և ամենապատկառ հայհոյանքը։ Աւելի քստմնելի այն է, որ նրանք երբէք չեն քաշվում փոքրահասակ երեխաներից — լինի աղջիկ կամ տղայ։ Նրանց մեծ հաճոյք է պատճառում, երբ 2—3 տարեկան թոթովող մանուկը սրանց-նրան լսելիք հայհոյանքներ է ասում։

Այսպիսի մի միջավայրում բնական է, որ մարդիկ, քիչ բացառութեամբ, այնպիսի քնաւորութեան տէր են լինում, որոնք իրանց այլանդակ արարքներով՝ մատաղ սերնդին էլ գցում են կործանիչ անբարոյականութեան ու այլասերման գիրկը։

Զուբկայի մօտ գտնվող Շաբշուկա գիւղում վերջերս պատահեց մի դէպք, որը մեծ ցնցում առաջ բերեց գիւղացիների մէջ և արժէ յիշատակել իբրև նմուշ հաղարաւոր դէպքերի։

Հաջի Թիւրվէնտ անունով անբարոյական մի կին, որ երկար տարիներ իր ամուսին Գէորգ Պետրոսեանի հետ անհաշտ էր ապրում, մտադրվում է նրան սպանել։ Այդ նպատակով նա ապակին ծեծում, փոշի է դարձնում և մի մէջ խառնած՝ եփում, որ ուտեցնի ամուսնուն ու այդպիսով նրա կեանքին վերջ տայ։

Կարապետ Ստեփանոյեանց անունով մի առոյգ երիտասարդ գալիս է Գէորգի մօտ՝ յայտնում, որ ինքը գնալու է Զուբկա, եթէ մի պատուէր ունի՞ ասի։ Գէորգը Կարապետին հիւրասիրում է գինիով և յետոյ ասում, որ կաթսայի մէջ եփած միս կայ, ասնի ուտի։ Կարապետը մի կտոր միս է առնում, դուրս գալիս և ուտելով գնում է։ Դեռ չէր վերջացրել՝ ստամոքսում ցաւ է զգում և բերանից արիւն հոսում։ Բերանի ճեացորդը հանում, նկատում է ապակու փոշիները։ Անմիջապէս գնում է Յարութիւն Ղուսումեանցի տունն և ասում, որ ինքը կը մեռնի ու պատժում իր հետ պատահածը։ Ղուսումեանցը կասկածելով Թիւրվէնտի վրա՝ կանչել է տալիս Գէորգին, յայտնում նրան եղելութիւնը և միասին գնում Թիւրվէնտից քացատրութիւն պահանջելու։ Վերջինս տեսնելով իր փորձի անաջողութիւնը ամուսնու վրա և հասկանալով գալիք վտանգը՝ մէջը տալիս է կատուներին, որոնք ուտելուց յետոյ պառկոտում են գետնի վրա և աղիողորմ կնձկնում։

Ասում են, որ Գէորգը տարիներ առաջ ուզեցել է կացնով իր կնոջ վիզը կտրել, բայց որդիքը և դրացիք արգելք են եղել։

Բառիս բուն նշանակութեամբ ոգէտ, կոպիտ և վայրենաբարոյ ժողովուրդը միայն ընդունակ է այսպիսի հրէշներ արտադրելու։

Շաբշուկա գիւղը, որ հաստատվել է անցեալ դարի 50-ական թուականներին, ունի մօտաւորապէս 200 տուն բնակիչ և երկու եկեղեցի՝ մի քահանայով։ ուսումնարան երբէք չէ ունեցել և չունի։ Եղել են զրաց «վարժապետներ»—տէր-Թոդիկներ, որոնք «հերկոց-ժաղիրքով» տղայց աւելի բըթացնում էին, քան թէ սովորեցնում։ Նախապաշարմունքը նրանց մէջ աւելի էին ամրապնդում՝ պատժելով նրանց ջինների, փերիների, սատանաների, ալքերի, դևերի, խօրդլանների և այլ առասպելական զարհուրելի պատմութիւններ։

Ամէն մի լուսաւոր միտք, գաղափար այնտեղ հանդիպում է ժայռի դիմադրութեան։

Լաւ ուսումնարանի դերը շատ մեծ է այնտեղ։

Ճամբորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ «Մշակի» հետեւեալ համարը Լուսաւորչի ծոնի պատճառով լոյս կը տեսնի երեքշաբթի, ապրիլի 1-ին։

◆ «Հասարակական կլուբի» խորհուրդը որոշել է սկզբում երեկոյթներ կազմել միայն շաբաթ օրերը, ժամանակաւոր շինութեան մէջ՝ Միքայէլեան փող. դրամատիրական կուրսերի բնակարանում, № 123։ Կլուբի բացումը տեղի կունենայ այսօր, շաբաթ, երեկոյեան ժամը 8-ին հետեւեալ ծրագրով. 1) Գ. Թումանովի բեֆերատը՝ Կովկասում զեմստվային հաստատութիւնները ժողովելու մասին. 2) Դրամա-երաժշտական բաժին է. Սօկօլովայի, Գ. Դոլուխանովի, կեանքի, Բ. Շէբոյեվի ժամանակագրութեամբ և այլն։ Բացի անդամներից թոյլատրվում են ներկայ լինել և հիւրեր անդամներ երաշխաւորութեամբ։ Անդամների համար մուտքը ձրի է. հիւրերը վճարում են 50 կոպէկ։

◆ Նովէմբերի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի յոբելեանի օրը, պատանական այգում լուսանկարիչներ Զանիս, Կլար, Գանկէվիչ, Միշչենկո, նկարիչ Զօմմէր և ուրիշները մի շարք տեսարաններ են նկարել։ Նկարների մեծ մասը աջող է։

◆ Պատանի և դժբաղդ Անդրանիկ Մանուէլեանի մահվան առիթով պ. Ստեփան Եարդուլեանցը նուիրեց էժանագին ճաշարանին 25 ր. և 25 ր. ևս յանձնեց մերխմբագրութեան՝ Զատկի տօներին չքաւորներին բաժանելու համար։ Երեկ 25 ռուբ. յանձնեցինք էժանագին ճաշարանի վարչութեան։

◆ Մարտի 27-ին «Գուտենբէրգ» գրախանութի տէր Գ. Գալստեանին Միքայէլեան հիւանդանոցից տարան իր տունը։ Այժմ կատարելապէս յոյս կայ, որ նրա վէրքերը կը բժշկվեն մօտիկ ապագայում։

◆ Ահա հինգերորդ օրն է, որ վիրաւորված ինժեներ Յար. Զախմախսազեանի դրութիւնը վատացել է։

◆ Մարտի 26-ին, ցերեկվայ ժամը 10-ին, Թիֆլիսի Մետեխի բանտի նոր շինութեան № 4 սենեակից բանտարկեալները խօսակցութիւն են սկսել անցնող ժողովրդի հետ և հացի գնդակներ են գցել փողոցում. բանտի առաջ կանգնած պահապան զինուորը արգելել է այդ, բայց բանտարկեալները ուշադրութիւն չեն դարձրել. պահապան զինուորը 1 անգամ կրակել է նրանց վրա, որով սպանել է Վանս Մակաիթաշվիլուն և վիրաւորել է Գիօ Դարիաշվիլուն և Վանս Սաքուաշվիլուն։

◆ Մարտի 26-ին Թիֆլիսի Մետեխի բանտում բանտարկեալները հացադուլ էին յայտարարել։ Հացադուլը միւս օրը երեկոյեան ժամը 4-ին վերջացաւ։

◆ «Кавказская Армія» լրագրի խմբագրութիւնը ձեռնարկել է մի պատկերազարդ ժողովածուի հրատարակութեան, որ ամբողջովին նուիրված է լինելու Կովկասի Փոխարքայի զինուորական ասպարիզում ցոյց տուած գործունէութեանը։

◆ Կովկասեան ֆիլօկսէրային կոմիտէտը ներկայումս զբաղված է ամերիկական խաղողի որթեր բաց թողնելու նոր կանոններ մշակելով։ Պահանջը այնքան մեծ է, որ բոլոր խնդրողներին բաւարարութիւն չէ դրվում։ Նոր կանոններով՝ տէրերը վաղօրօք պէտք է հարցմունք տան բուծարաններին՝ կարող են նրանք, արդեօք, բաց թողնել խաղողի որթերի հարկաւոր քանակութիւն։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն դպրոցների կառավարիչներին մի հրահանգագիր է ուղարկել, որով առաջարկում է վերատեսուչներին և դասատարակներին խիստ հսկողութիւն ունենալ, որպէսզի աշակերտները որևէ զէնք չունենան իրանց մօտ, և ծնողներից ստորագրութիւն վերցնել, որ նրանք կը հետեւեն իրանց զաւակներին և ոչ մի դէպքում թոյլ չեն տայ նրանց զէնք ունենալ։ Ընդ սմին հոգաբարձուն նախազգուշացնում է, որ այն աշակերտները, որոնց մօտ զէնք կը գտնվի, անմիջապէս կարտաքսվեն դպրոցներից։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի առաջարկութեամբ, մարտի 26-ին կայացաւ Թիֆլիսի 1-ին արական գիմնազիայի շինութեան մէջ միջնակարգ դպրոցների բոլոր վերատեսուչների և կառավարչուհիների ժողովը, խորհրդակցելու այն հարցի մասին, թէ ինչ կերպ պէտք է հսկողութիւն սահմանել ուսանողութեան վրա դպրոցից դուրս։ Հոգաբարձուներին առաջարկված է մի յատուկ ժամանակագրով ընտրել՝ մի քանի կանոններ մշակելու համար, որոնց հաստատութիւն է լինելու աշակերտների վրա, դպրոցից դուրս։

◆ Այսօր, շաբաթ, երեկ. ժամը 7-ին, հասարակական գրադարանի դահլիճում տեղի կունենայ Մոսկվայի հնագիտական ընկերութեան կովկասեան բաժանմունքի նիստը, ուր Ե. Լալայեան զեկուցում կը կարդայ Նոր-Բայազէտի գաւառում կատարած պեղումների մասին։

◆ Վաղը, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին Հասարակական գրադարանի դահլիճում (պալատի դիմաց) նշանակված է հայոց ազգագրական ընկերութեան ընդհանուր ժողով, ուր քննվելու է նաև խորհրդի առաջարկը պրոֆ. Մարրին ընկերութեան պատուաւոր անդամ ընտրելու, և որի առիթով մի զեկուցում կը լինի պրոֆ. Մարրի գրական գործունէութեան մասին։ Դահլիճում ցուցադրված կը լինի Ե. Լալայեանի Նոր-Բայազէտի գաւառում կատարած պեղումների արդիւնքը, որի մասին բացատրութիւններ կը տրվեն հետաքրքրվողներին նախ քան ժողովը սկսվելը՝ ժամը 11-ից։

◆ Վաղը, կիրակի, մարտի 30-ին, հայ բեմի սիրողները Աւճալեան ժողով. ընթերց. դահլիճում կը ներկայացնեն «Պէպո» և «Փաստաբանի օրը»։

◆ Մարտի 30-ին բժ. Թատիսեան, առ. ժ. 10½-ին, Զուբալօվի ժողովրդական տանը կը կրկնէ իր դասախօսութիւնը «Մեր օրերի հասարակական տրամադրութեան հիւանդոտ երևոյթները» թեմայով։ Մուտքը 5—10 կոպէկ։

◆ Այսօր, մարտի 29-ին, Հալաթարում, Վարշաւօվի թատրոնում, ցերեկվայ ժամը 12½-ին, մի խումբ ինտելիգենտ անձինք կազմակերպում են մանկական ցերեկոյթ մոգական պատկերներով և խրատական երգերով։

◆ Մեզ խնդրում են ազդարել հետեւեալը. «Թիֆլիսի Ձրի և էժանագին ճաշարանի և թէյարանի ընկերութեան վարչութիւնը ստացել է Եղիսաբեթ Ենիկոլոփեանից 50 ր., Գրիգոր աւ. քահ. Տէր-Բարսեղեանի զաւակներից 150 ր. և Յակոբ Մանուէլեանից հոգեհացի փոխարէն 25 ռուբլի։ Վերոյիշեալ անձերին վարչութիւնը յայտնում է իր անկեղծ շնորհակալութիւնը»։

◆ Կրկին վատնում։ Պարէշովի ծննդեանների կասսան մինչև մարտի 1-ը ունեցել է մուտք 65,456 ր. 1300 անդամներից։ Այս գումարից ծախսված է 61,258 ր. 59 կոպ., բացէ ի բաց վատնում վերատուգիչ յանձնաժողովի եզրակացութեամբ կասսայի հիմնադիրները կատարել են 500 ռուբլու։

◆ Թիֆլիսի նահանգապետը, ի նկատի ունենալով ծննդեանների զանազան կասսաներում կատարված գեղծումները, այլ ևս չէ թոյլատրում որևէ նոր կասսայի բացումը։

◆ «Жизнь» լրագրի խմբագիր Ա. Կալանտաձէն, որին մօտ օրերս ազատեցին բերդից, ինչպէս հաղորդում է «Зак.» լրագիրը, պատմել է, որ մարտի 14-ին նա ենթարկվել է նահանգական բանտում մի քանի քրէական բանտարկեալների յարձակման, որոնք, վայր գլորելով նրան, շատ բանտարկեալների ներկայութեամբ բռնել են կոկորդից և խլել են քսակը և ժամակացոյցը։

◆ «Ցանտաղիա» այգում, մարտի 27-ին, Թիֆլիսի վրաց ինտելիգենցիայի ներկայացուցիչները մի ճաշով պատուել են աղաբացի և Կօբուլէտի վրացի ժամհրեականներին։

◆ Մարտի 27-ից Թիֆլիսում սկսվեց ֆունիկուլյօրի կանոնաւոր երթևեկութիւնը։ Ծառայողներից ոչ ոք արձակված չէ։

◆ Մարտի 21-ին, առ. ժամը 10-ին, Թիֆլիսի վրաց սեմինարիայի րեկտորի բնակարանի դռան մօտ ինչ-որ անյայտ չարագործներ դրած են եղել պետարդ, որը պայթել է և մեծ իրարանցում ձգել։ Այդ առիթով հետեւեալ օրը, դպրոցի վարչութեան թոյլտուութեամբ, սեմինարիայի աշակերտները գումարեցին ընդհանուր ժողով, ուր մի վճիռ ընդունվեց, որով պարտաւանք է յայտնվում բոլոր այդպիսի պրովոկացիական և խուլիգանական գործողութիւններին։

◆ Նկատի առնելով, որ Կարսի երկաթուղագծի վրա, Ալէքսանդրօպոլի մօտերը՝ զուտիվերի պատճառով այժմեան շոգեմեքենաները անզօր են լինում տանել գնացքները, մտադրութիւն կայ Սիբիրի երկաթուղագծերից բերել տալ Ֆէրլի և Մալէէ-տա սիստեմի ուժեղ շոգեմեքենաներ։

◆ Վրաց «Ամիրանի» լրագրի խմբագիր-հրատարակիչ Կավտարաձէն, գեներալ-նահանգապետի հրատարակած պարտադիր կանոնների 1-ին կէտի հիման վրա, ենթարկվել է 200 ռուբլի տուգանքի կամ անկարողութեան դէպքում մի ամսով բանտարկութեան։

◆ Ստացանք Դ. Վարուժանի «Զարդը» 1895—1896 թ.թ., Պարիզ, գինը 50 սանտիմ։

◆ Մարտի 25-ին Փօթի քաղաքում ոստիկանութիւնը և զօրքը խիստ կերպով խուզարկել են «Ճիսթուրա» շոգենաւը։ Կասկածելի ոչինչ չէ գտնված։ Խուզարկութիւնը կատարվել է տարածված լուրերի հիման վրա, իբր թէ շոգենաւով զէնք են տեղափոխում գաղտնի կերպով։

◆ Թիֆլիսի քաղաքային ծննդաբերական ապաստարանում մօտ օրերս մի կին պատկել է և ծնել է 3 զաւակ՝ երկու տղայ և մի աղջիկ։ Երեքն էլ ծնվել են կենդանի, իւրաքանչիւրը 3-ական ֆունտ։ Ապրելով երկու ամրողջ օր, երեքն էլ մեռնում են։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՆԱՆՔԻՑ

—

◆ Պետերբուրգի քաղաքապետի կողմից, կանանց բարձրագոյն դասընթացների դիրեկտոր պրոֆ. Ֆաուսեկի վրա նշանակված 1000 ռուբլի տուգանքը վճարել են ուսանողուհիները հանգանակելով իրանց մէջ։

◆ Ֆինլանդական լրագիրների ասելով, Աւերիկայում ռուսաց իշխանութեան պահանջի համաձայն կալանաւորված է «Savon Tyomies» լրագրի նախկին խմբագիր, յայտնի սոցիալիստ Ի. Մուստօնենը։

◆ Ռուսաստանի և ուրիշ երկիրների կրթական ու դաստիարակչական գործի ժամանակակից վիճակը պարզելու նպատակով, Կրթական Լիգան Պետերբուրգում կազմակերպում է «Կրթութիւն և դաստիարակութիւն» միջազգային ցուցահանդէսը։ Ներկայումս արդէն մշակված է ցուցահանդէսի ծրագիրը։

◆ Մօտ օրերս Պետերբուրգում, կրօնական-բարոյակրթական ընկերութեան դահլիճում, Ատոնիդ միտրօպոլիտի նախագահութեամբ, տեղի է ունեցել Պետերբուրգի հոգեւորականութեան բազմամարդ ժողովը, մայրաքաղաքում ազանդաւորութեան դէմ մաքառելու հարցի մասին խորհրդակցելու համար։ («Բեպ»)

◆ Մոսկվայի հոգեւորականի պրոֆ. կոժեվնիկովի յարուցած միջնորդութեան հաժաձայն, Սեվաստօպոլի գեներալ-նահանգապետը, «Нов. Вр.»-ի ասելով, թոյլատրել է ընագիտական մասի ուսանողներին Զատկի տօների ընթացքում մնալ Սեվաստօպոլում Սև ծովի բուսականութիւնը (ֆլորան) ուսումնասիրելու համար, այն պայմանով միայն, որ էկսկուրսանտների մէջ հրէաներ չը լինեն։

◆ Մարտի 18-ին, «Բեպ» լրագրի ասելով, Ցարսկոյ քաղաքի պատգամաւորութիւնը ներկայացել է ժողովրդական լուսաւորութեան մինիստր Շվարցին և խնդրել շտապեցնել Սարատովում բժշկական ֆակուլտետ բանալու հարցը։ Մինիստրը, համակրութիւն յայտնելով այդ հարցին, այնուամենայնիւ գտնում է, որ բազմաթիւ արգելքներ կան դրա համար, ինչպէս օրինակ պրոֆեսորների ձեռնարկներ չունենալը։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 26 մարտի

«Հովիւը» մի շարք յօդուածներով բողոքում է, թէ հակառակ հանգուցեալ տէր-Ղևոնդ Խարազեանի ծխականների ցանկութեան, թեմական իշխանութիւնը կարգադրել է հրաւիրել նաև քահանայ ունեցող ծխականներին մասնակցելու Խարազեանի տեղը քահանայացուի ընտրութեանը և թէպէտ միևնոյն ժամանակ «Հովիւը» խոստովանվում է, որ այս անօրէնութիւնը արված է հաւանաբար նոր կանոնադրութեան, սակայն նա այս կանոնադրութիւնը համարում է անկանոն ու անհեթեթութիւն և նրա կարծիքով քահանայի կարիք ունեցող ծխականները միայն իրանք պէտք է ընտրեն իրանց հաւատ քահանայ, առանց ուրիշների միջամտութեան։

Մեզ զարմացնում է «Հովիւի» այսպիսի դատողութիւնը և լոգիկան. մի՞թէ թեմական վարչութիւնը իրաւունք ունի շեղվել կանոնադրութիւնից, որը հաստատված է հոգեւոր բարձրագոյն իշխանութեան կողմից, շատ էլ որ այդ կանոնադրութիւնը ունենայ թերութիւններ. եթէ չունի այդ իրաւունքը, ուրեմն ինչումն է նրա մեղը. մի՞թէ նրա՞նում, որ նա չէ վարվում համաձայն Խարազեանի ծխականների հաճոյքի։ Մենք վերոյիշեալ կանոնադրութեան մէջ, գտնէ քահանայի ընտրութեան վերաբերմամբ, ոչինչ թերութիւններ չենք տեսնում. ընդհակառակը, նա ունի բարի դիտաւորութիւն։ Մենք գիտենք, որ շատ դէպքերում քահանայի կարիք ունեցող ծխականների մեծամասնութիւնը չէ էլ ճանաչում թեկնածուին, և չը նայելով որ սա չէ համապատասխանում քահանայի կոչմանը ոչ իր գիտութիւնով, ոչ ձայնով և ոչ էլ վարք ու բարքով, այնուամենայնիւ ընտրվում է քահանայ, ի հարկէ խնդրանօք ազգականների և ազդեցիկ մարդկանց։ Այսպիսի օրինակներ շատ ենք մենք տեսնում այժմեան քահանայական դասի մէջ, չը նայած նրանց խաչերին և կամիլաւկաներին։ Այս ամենն ի նկատի ունենալով՝ նոր կանոնադրութիւնը կարևոր է համարել թոյլ տալ, որ անկախ ժողովուրդն էլ մասնակցէ ընտրութեանը։

Քահանայի արժանաւորութիւնը նրանում չէ պարունակվում միայն, որ նա գիտենայ ակրտութեան, հարսանիքի և մեռել թաղելու կարգերի կատարելը, այլ նա պէտք է լինի գլխաւորապէս ճեմարանաւարտ, իսկ եթէ ոչ, գոնէ թեմական դպրոցը աւարտած, քիչ ու շատ եկեղեցուն սպասաւորութիւն արած,—ամենապակասը երկու կամ երեք տարի, գիտենայ նրա ծիսատարութիւնները, ունենայ աջող ձայն և լինի բարոյական անձն։

Մենք ունենք այժմս Խարազեանի տեղի համար երկու թեկնածուներ, որոնք են Վանքի եկեղեցու սարկաւագներ—Խուդեան և Ալիխանեան. թող ժողովուրդը անաչառութեամբ կշռէ սրանց արժանաւորութիւնները և ընտրէ նրան, որը աւելի համապատասխանում է վերոյիշեալ պայմաններին։

Զ.

—

Մերվ, 11 մարտի

«Մշակի» 49-դ համարում, Կուշկայից, գաւառական տեղեկութիւնների բաժնում, «Բանւոր» ծածկանուն տակ թաղված մի ոմն յայտնում է, որ Զախմախսազեանի թաղումը կատարվել է իբրև թէ շատ անշուք և առանց խնկի, պատճառը քահանային հարձակելով։ Եւ որովհետև այդ խօսքերը ինձ են վերաբերում, յանուն անաչառութեան խնդրում եմ տպել հետեւեալը.

Նախ. Զախմախսազեանին սպանող չարագործները գտնվել են ոչ միայն ոստիկանութեան, այլ գլխաւորապէս տեղացի մի քանի երիտասարդ արհեստաւորների շնորհիւ։

Բ. Ես հեռագրով կանչված չեմ եղել, քանի որ հանգուցեալը Կուշկայում ոչ մի ազգական կամ բարեկամ չէ ունեցել, այլ ինձ բերանացի խնդրել են Մերվում։

Գ. Վերջապէս ի՞նչ է նշանակում անշուք թաղվել. տիրացուիս հետ կատարել ենք թաղման բոլոր կարգերը. ի՞նչ կը կամենար Բանւորը. գուցէ կուզենար պատարագ տեսնել Կուշկայի պէս չօլ տեղում և կամ երաժշտութիւնով ու զինւորական պատիւներով թաղված Զախմախսազեանի պէս մի մարդու՝ որ բացարձակօրէն իրան հեռու է պահել հայ եղբայրներից ու ամբողջ կեանքը անց է կացրել թուրքաց թէյարաններում։

Ես շատ ուրախանում էի տեսնելով, որ վերջերում «Մշակի» մէջ գաւառական կեանքին աւելի մեծ տեղ է տրվում։ Եւ եթէ մեծուն ընդհանրապէս և մասնաւորապէս գաւառական խղճուկ ու նեխված կեանքի հայելին պէտք է լինի, այն ժամանակ Բանւորի պէս գրչակներին խորհուրդ կը տայի այդ կեանքն ու տառապող ժողովուրդը ներկայացնել իրանց իսկական գոյներով և ոչ թէ «Մշակի» պէս մի լրագրի առանց այն էլ սուղ էջերը անպիտան ես-ի ու ատելութեան ծառայեցնել։

Մերվի և շրջակայքի հայոց հոգեւոր հովիւ
Ալ. ք. Գալստեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, 13 մարտի

Ներփակ ուղարկում եմ մի նշանաւոր կտակի պատճէնը և խնդրում եմ, որ ի լոյս ընծայէք նրան հասարակութեան գիտութեան համար*)։

Կտակագրողը՝ հանգուցեալ Աժիր-Թուժան Մարտիրոս-խան Դաւիթխանեանցն է։ Պարսկաստանում շատ քիչ մարդ կը ճարվի, որը լսած չը լինի նրա անունը և որը կենդանի հաւակրութեամբ լցված չը լինի դէպի նրա անձնաւորութիւնը։

Մարտիրոս-խան Դաւիթխանեանցը իր մահկանացուն կնքել է անցեալ 1905 թուի դեկտեմբեր ամսի 11-ին։ Իր կենդանութեան ժամանակ, իր պաշտօնի և դիրքի բարձրութիւնից, նա շարունակ և անընդհատ սիրել է իր ազգը և իր միջավայրը։ Չը բաւականանալով այդքանով, նա շատ յաճախ, կարելի է ասել որ միշտ, հոգու մի առանձին կորովով օգնութեան է հասել իր այդ ազգի և միջավայրի կրթական-կուլտուրական և բարեգործական հաստատութիւններին, այն ևս երկու ճանապարհով—նիւթական և բարոյական ճանապարհներով։ Դրանով ևս չը գոհանալով, նա իր կեանքի վերջալոյսին, այն է 1902 թուի յունվարի 1-ին, վերոյիշեալ կտակով ազգային մի շարք հաստատութիւններին է թողել իր կարողութեան մի խոշոր և զգալի մասը։

Եթէ մենք ուշի ուշով հետեւենք կտակի բոլոր տրամադրութիւններին, կը տեսնենք, որ նրա մէջ արտացոլված են մի շարք վեհ գաղափարներ. կը տեսնենք, որ հանգուցեալ Մարտիրոս-խանը իր կենդանութեան ժամանակ փայփայելիս է եղել այնպիսի մարդասիրական և կեանքի անմիջական պահանջներից բղխած ըէալ գաղափարներով, որոնց պատճառով չենք կարող չը խոնարհվել նրա յիշատակի առաջ ու համակրական ջերմ համբոյրներ չը դրոշմել նրա դեռ ևս թարմ հողակոյտին։

Ուշիմ ընթերցողը դիւրութեամբ պէտք է տեսնի, որ հանգուցեալ Մարտիրոս-խանը իր կարողութիւնից մասն և բաժին է հանել հետեւեալ հաստատութիւններին.

1) Նոր-Զուղայի Ամենափրկիչ վանքին՝ 1000 թուման։

2) Նոր-Զուղայի աղքատախնամ և հիւանդապահ ընկերութեանց միացեալ սընդուկին՝ 1000 թուման։

3) Թէհրանի հայոց եկեղեցիներին 1000 թուման։

4) Թէհրանի աղքատ ընտանիքներին՝ 1000 թուման։

5) Թէհրանի օրիորդաց դպրոցին՝ մի տուն 4—5000 թ. արժողութեամբ։

6) Իր կին Կատարինէ խանումի բաժինը նրա մահից յետոյ ազգային որևէ մէկ հաստատութեան՝ 20—25,000 թ. (տան մաս, դրամագլխի բաժին և զարդեղէն)։

7) Թէհրանի դպրոցների երեք դասարաններին՝ 8000 թ. (այստեղ թէև քանակութիւն չը կայ յիշված, բայց որովհետև դրամագլուխը հասնում է մօտ 30,000 թուման և որովհետև այստեղ բովանդակվում է այդ դրամագլխի մի երրորդ մասը, ուստի կարելի է ենթադրել, որ 8000-ից պակաս չի լինի)։

8) Հասանաբադում կառուցվելիք հայոց եկեղեցուն իր շքանշաններն ու ականակուռ սուրը արժողութեամբ մօտ 3,500 թ.։ Այդպիսով ազգի շահերը շօշափող ընդհանուր գումարը հասնում է մօտ 39,500—45,500-ի, որպիսի գումարը օրվայ գնուրսով, եթէ վերածելու լինինք ռուբլու, կը ստանանք 79,000-ից մինչև 91,000-ի չափ պատկառելի մի գումար։

Բացի այդ՝ հանգուցեալը իր ժառանգների վրա պարտք է դնում, որ երբ նրանք ծախեն մեծ տունը, նրա գումարով գնեն մի գիւղ Թէհրանի շրջակայքում։ Կարելի է այն ժամանակ ժառանգներին այնպէս տրամադրել, որ փոխանակ պարսկաբնակ գիւղի՝ հայաբնակ գիւղ գնեն և այդպիսով մի բուռն հայեր ազատեն ֆէօդալի ուժեղ ճանկերից և անգութ շահագործումից։ Մեծ տունը այժմ կարժի առպակասը 50—60,000 թուման։

Անշուշտ վերոյիշեալ այդ թուերը չեն, որ արտայայտում են կտակ անողի կամքն ու ցանկութիւնը։ Մենք, բացի կտակի մէջ որոշակի յիշատակվածներից, միւս թուերը նշանակել ենք մօտաւոր չափով, այն ևս յօգուտ minimum-ի։ Շատ հաւանական է, որ նրանք աւելի մեծ լինեն, քան մենք ընդունել ենք։

Ցիշեալ այդ կտակը կտակագրի մահից է վեր դեռ չէ ծառայել իր նպատակին. նրա և ոչ մէկ յօդուածը դեռ չէ մտել գործադրութեան մէջ։ Այսպէս ասելը և անցնելը քիչ է։ Կտակը ենթակայ է վտանգման, նա թերևս շուտով դադարի այլևս կտակ լինելուց, եթէ կտակատարները մի կարճ ժամանակ ևս շարունակեն չը ժամանել նրա մէջ արծարծված գաղափարների վեհութիւնն ու խորութիւնը։

Ինչպէս կարելի է տեսնել կտակից, կտակատարները երեք են. Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդը, նոյն թեմի առաջնորդական խորհրդարանը և հանգուցեալի որդի Ալէքսանդր-խանը։

Որքան մեզ աջողվել է իմանալ, Ալէքսանդր-խանը այսօր ևս պատրաստ է կատարելու իր հանգուցեալ հօր ցանկութիւնները ըստ կտակի, եթէ միայն կտակը ամբողջովին ծառայի իր հիմնական նպատակին։ Կարծեօք, հանգուցեալ Մարտիրոս-խանի միւս ժառանգները կտակի 8-դ յօդուածը խախտել են յօդուտ իրանց և ի վնաս Ալէքսանդր-խանի։

Ցանկալի է ժամուլի միջոցով լսել, թէ Ալէքսանդր-խանը ինչ հիմնական պատճառներ ունի իր ձեռքում, որ ամբողջ երկու տարի գործադրութեան մէջ չէ դրել իր հանգուցեալ հօր կտակը։ Այդ հարցը

*) Ցուցել ենք յիշեալ կտակի պատճէնը, որը կը տպենք առաջիկայում։ Խմբ.

մենք ստիպված ենք տալու նրան, որովհետև նա և կտակակատար է և իր հոր ցանկութիւնների աւանդապահը։ Եթէ նա նոյնիսկ կտակակատար էլ չը լինի, այնուամենայնիւ մեծ պարտականութիւն ունի հրաւիրելու և հոգ տանելու, որ կտակը մեռելութեան չը դատապարտվի և չը դառնայ մրկների կերակուր Ն.-Զուղայի և Էջմիածնի արխիվներում։

Ցանկալի է նոյնպէս լսել, թէ ինչու Բագրատ վարդ. Վարդազարեանը, որ և կտակակատար է և ի պաշտօնէ ազգային հաստատութիւնների շահերի պաշտպանը, ամբողջ երկու տարի անփոյթ է մնացել և թոյլ տուել, որ ազգային մի շարք հաստատութիւններ ամբողջ երկու տարի զրկվեն իրանց համար կտակված խոշոր գումարներից։ Պէտք է հայր Բագրատ վարդ. Վարդազարեանը հասարակութեան առաջ պարզի, թէ ինչ հիմունքով նա անմիտ կռիւ է վարել Խորէն վարդապետի հետ և միանգամայն բարձր-թողի է արել այդ կտակը։

Ինչպէս լսում ենք, Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդական խորհրդարանը թիւր մեկնութիւններ է տալիս կտակի մի երկու յօդուածներին, որով դանդաղեցնում է նրա գործադրութիւնը։ Ցանկալի է և պէտք է, որ այդ խորհրդարանը հասարակութեան սեփականութիւն դարձնի իր մեկնութիւններն ու բացատրութիւնները, այն ևս պատճառաբանված կերպով։

Այդ երեք կտակակատարների խորհրդածութիւններն ու կարծիքները լսելուց յետոյ, խիստ ցանկալի կը լինէր լսել նաև «Մշակի» խմբագրութեան և ձեռնհաս անձնաւորութեանց կարծիքները։

Ազգային հաստատութիւններին նուիրաբերված գումարը խոշոր գումար է։ Ի սէր այդ հաստատութիւնների և նրանց իդէալական նպատակի մի խախտէք կտակը և մի վտանգէք նրա գոյութիւնը։

Ա. Մուրադեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

27 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նախահաշիւի մասնաժողովը երկրագործութեան վարչութեան և նրա բաժանմունքների 1908 թ. ելևմտի վերաբերութեամբ առաջարկում է հետևեալ բանաձևը.

«Անհրաժեշտ ընդունելով վարչութեան առաջիկայ՝ հաճաձայն հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի յայտարարութեան, վերակազմութեան մէջ, վարչութեան կենտրոնական կառավարութեան կից հաստատել մի ընտրելի հաւաքական մարմին, որպիսին կը հանդիսանայ գիւղատնտես։ Գեան տեղական շահերի ներկայացուցիչը և որոշ պարտականութիւններ կը կատարէ երկրագործութեան վարչութեան գործունէութեան ուղղութիւնը որոշելու և երկրագործութեան տեղական կառավարութիւնները զարգացնելու շրջանում, այնպէս, որ նրանց մէջ անմիջական մասնակցութիւն ունենան նաև դէմստվօների և գիւղատնտեսական ընկերութիւնների ներկայացուցիչները, անհրաժեշտ ընդունելով գիւղատնտեսական և մասնաւորապէս մեքիօրատիվ վարկի հանրամատչելի լայն կազմակերպութիւն ստեղծել և Եւրօպական Ռուսաստանում հողային բարելաւումների բաժնի գործունէութիւնը տարածել առանձնապէս այն տեղերի վրա, ուր հողի պակասութիւն կայ, երկրագործական գլխաւոր բայօններում համալարաններին և տեխնոլոգիական ինստիտուտներին կից գիւղատնտեսական բաժանմունքներ բանալ և ուսումը յարմարեցնել այդ բաժանմունքներում և հաստատութիւններում, անհրաժեշտ ընդունելով վերակազմել միջնակարգ գիւղատնտեսական դպրոցները այնպէս, որ մեծ ուշադրութիւն դարձվի գործնական գործունէութիւն պատրաստելու վրա, գիւղատնտեսութիւնը ՁԱՍՈՂ կենդանիների դէմ կռիւ միջոցները հետազօտելու գործը բարելաւել այն մտքով, որպէսզի այդ նպատակով կատարվող փոր-ների մօտակայ խնդիրը հանդիսանայ ընդունելութեան և մեթոդների մշակումը, որոնք կարող լինեն ընդարձակ չափով գործադրութեան հանվել կեանքում, ձկնորսութիւնը դարձնել ինքնուրոյն գործ,—Դուման անցնում է հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան պետական նախահաշիւի նախագծի առանձին կէտերի քննութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նախահաշիւի մասնաժողովը հողային բարեկարգութեան և պետական հողային կալուածքների վարչութեան գլխաւոր կառավարչի դիւանատան ծախքերի վերաբերութեամբ առաջարկում է հետևեալ բանաձևը.

«Անհրաժեշտ ընդունելով, որ հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը պետական ծախքերը կրճատելու նպատակով վերաքննութեան առնէ գլխաւոր կառավարչի առանձին յանձնարարութիւնների և իրիխտօնուլեան մասի պաշտօնեաների ցուցակները, որ վարչութիւնը որոշումներ մշակէ տեղական կառավարութիւններից մի քանիսը միացնելու, ինչպէս և Թիւրքեստանի և Կովկասի կառավարութիւնները վերակազմելու մասին, որ ուսումնական յանձնաժողովի և նրան կից գտնվող բիւրոյի գործունէութիւնը ուղղված լինի գլխաւորապէս երկրագործ աղգաբնակութիւնը աւելի ընդարձակ չափով ծանօթացնելու գիւղատնտեսութեան բարելաւման եղանակների և փորձնական հետազօտութիւնների հետևանքների հետ, որ վարչութիւնը կանոններ մշակէ նահանգական հողային բարեկարգութեան մասնաժողովների մշտական անդամների շտատի պաշտօններ հաստատելու և հողային բարեկարգութեան գործերի յանձնաժողովին կից պաշտօնավարող առանձին յանձնարարութիւնների պաշտօնեաների, շտատի պաշտօնները վերացնելու մասին, որ վարչութիւնը կանոններ մշակէ Պետական Խորհրդի 1893 թ. փետր. 22-ին հաստատված որոշումի երկրորդ կէտը փոփոխելու մասին, որ Բեսարաբիայի կալուածքներից և արտասահմանեան հոգևոր կառավարութիւններից ներքին գործերի և ժողովրդական լուսաւորութեան մինիստրների ձեռքը անցնող բոլոր գումարները, ինչպէս և այդ գումարներից գոյացած դրամագլուխները գործադրվեն պատշաճ վարչութիւնների նախահաշիւների համաձայն, և որպէսզի մինչև գալիք տարի որոշումներ կայացվի այն մասին, թէ կարելի է շահագործել Բեսարաբիայի կալուածքները և արտասահմանեան հոգևոր վարչութիւնները՝ հողագործել և սակաւահող գիւղացիութեանը հող տալու նպատակով, որ առանձին վարչութիւնների նախահաշիւի մէջ չը մտնեն «չը նախատեսված կարիքների համար» անուան տակ յատկացվող գումարները, որ զեկուցագրում յիշատակված դժուարութիւնների առաջն առնելու համար ուղղված լինի նախահաշիւը կազմելու ձևը և որ աւելի մանրամասն թուանշաններով տեղեկութիւններ պարունակվեն,—Դուման անցնում է հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի դիւանատան ելևմտի առանձին կէտերի քննութեան»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նախահաշիւի մասնաժողովը անտառային վարչութեան ելևմուտի վերաբերութեամբ առաջարկում է հետևեալ բանաձևը.

«Անհրաժեշտ գտնելով, որ ամեն միջոց ձեռք առնվի արագացնելու Եւրօպական Ռուսաստանի և Կովկասի անտառների հետազօտութիւնը, որ մինչև 1909 թ. մշակված լինի Ասիական Ռուսաստանի անտառները հետազօտելու մի ծրագիր, որ անտառային տնտեսութեան մի պլան կազմվի, որ ապահովէ ինչպէս անտառների շահագործութեան եկամուտները, այնպէս և նրանց պահպանութիւնը,—Դուման անցնում է հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան պետական ելևմտի նախագծի առանձին կէտերի քննութեան»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժողովրդական կրթութեան մասնաժողովը որոշեց ընդունել Դումայի 94 անդամների առաջարկը՝ 1908 թ. սխեմայի նախահաշիւով 4,003,740 բուբլի յատկացնել եկեղեցական դպրոցների աշակերտների ոռճիկների և նոր դպրոցներ բանալու և պահպանութեան համար։

28 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բացվեց արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների երրորդ հանդիսումը։ Ժողովվել են մօտ 300 հոգի։ Հանդիսումը կը տևէ 40 օր։

Արտաքին

28 մարտի

ԼՕՆԴՕՆ։ «Ստանդարտը» խօսելով մակեդոնական հարցի բանակցութիւնների դրութեան մասին, այն միտքն է յայտնում, որ կառավարութիւնը չը պէտք է երկիւղներ տայ սուլթանին, այլ պէտք է գործէ նրա հետ ձեռք ձեռքի տուած՝ Մակեդոնիայում հանգստութիւն հաստատելու համար։

ՊԱՐԻԶ։ «Թան» և «Ժուրնալ դէ-Դեբա» լրագիրները համակրանքով քննադատում են Պիշոնի՝ մակեդոնական հարցի վերաբերութեամբ արտայայտած կարծիքները, և մատնանշում են, որ Ֆրանսիական կառավարութեան գրաված դիրքը ռուսական և անգլիական նոտաների վերաբերութեամբ ժամանակայն համապատասխանում է Ֆրանսիայի գերագոյն շահերին։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Սենատը ընդունեց զօրքի վերակազմութեան օրէնքը։

ԼԻՍԱԲՕՆ։ Գիշերս զինուորական պահակախումբը ենթարկվեց անյայտ անձերի յարձակման. մի զինուոր սպանվեց, միւսը վիրաւորվեց մահացու կերպով։

ՎԻԵՆՆԱ։ Փակվեց Ներքին հիւանդութիւնների բժշկական համագումարը։

ԼՕՆԴՕՆ։ Ռէյտերին Տօկիօյից հեռագրում են. «Տեղական լրագիրների ասելով, Միացեալ Նահանգների գործողութիւնները Մանջուրիայում ռուսական վարչութեան վերաբերութեամբ գործնականապէս ուղղված են եապօնական վարչութեան դէմ։ Եապօնական արտաքին գործերի մինիստրութիւնը հերքում է այդ, յայտնելով որ թոյլ չի տայ, որ Ամերիկան ներկայացուցչի դիմադրէ Եապօնիայի գործակալներին Հարաւային Մանջուրիայում»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԳԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌԱՑՏՆՈՒՄ ԵՆՔ
ի գիտութիւն հայոց եկեղեցականների,
որ մեզ մօտ պատրաստվում են
ՆՀԽԱՐԻ ԿԵՂԱՊԱՐՆԵՐ

հայոց ճաշակի, գեղեցիկ քանդակով—խաչելութեան։ Գինը 3 ր., քաղաքից դուրս գնողներին 3 ր. 50 կ.։ Ծախվում է և ծակոտիչ, գինը 50 կ.։ Հասցէն՝ Թիֆլիս, Վիննի-Պաղեսմ, № 47 (7-րդ քաղաքամասում) Գասպար Տէր-Սարգսեանցին
(շ. ե. հ.) 3—1

Լոյս տեսաւ
ՀՄԵՂԻ
X հարուստը կռապաշտ
և
Մախաբի ծակում
գրքոյկը, 28 էջ։ Գինն է 8 կոպ.
Հարցնել գրախանութներում։
(հ. կ.) 10—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, որ մարտի 31-ին, երկուշաբթի, նշանակված է ընդհանուր ժողով Թիֆլիսի ժողովարանի կանդիդատներ առաջարկված անձանց քուէարկելու համար։
Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին։
(23, 28, 30) 3—3

Զուբալովի Ժողովրդական Տուն
Շաբաթ, մարտի 29-ին
«ՆՈՐ-ԴՐԱՄԱՅԻ» սիրող խումբը
առաջին անգամ կը ներկայացնէ հայերէն լեզուով
I
ԱՐԵԱՆ ԲԻԾ
դրամ. 3 գործ. հեղ. Մէյլանի և Բուլէի
Թարգմ. Մուրէնի
II
ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄՕՏ
վոդեվիլ 1 գործ. փոխ. Տէր-Դաւթեանի
Բէժիսսեօր՝ Ա. Աբրահամեան
Սկիզբն է առաւօտեան ժամը հիշատ 12-ին
Տոմսերը վաղօրօք կարելի է ստանալ թատրոնի կասսայում։
Տեղերի գները 1 ր. 10 կ.
Կարգադրիչ. Ա. Աբրահամեան և Մհերեան
(ու. շ.) 2—2

ՀՐԱՒԷՐ
Կաթուղիկէ ս. Աստուածածին (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցու ծխականները հրաւիրվում են
Երկրորդ ընդհանուր ժողովի,
որ կայանալու է կիրակի, մարտի 30-ին, ժամը տաս և կէսին առաւօտեան։
Զբաղմունքի առարկաներն են
1) 1906 և 1907 թ. թ. հաշիւ.
2) 1908 թ. նախահաշիւ.
3) Հոգաբարձական կազմի ընտրութիւն.
4) Ընթացիկ խնդիրներ։
(ու. շ.) 2—2

Norddeutscher Lloyd
(Հիւսիս-գերմանական Լլոյդ)
Գօստային և նաւային հաղորդակցութիւն Բրէմէնի և Նիւ-Եօրքի միջև.
Շաբաթը երկու անգամ
Հինգ-վեց օրվայ ճանապարհորդութիւն ովկիանոսի վրայով։ Բացի դրանից՝
Բրէմէնից—Վալտիմօր
Բրէմէնից—Գալվէստոն
Բրէմէնից—Բրազիլիա
Բրէմէնից—Արգենտինիա
Բրէմէնից—Արևել. Ասիա՝ Աւստրալիա
Լլոյդի նաւերի գեղեցիկ կազմը, առաջնակարգ խոհանոցը և ճանապարհորդների հետ խնամքով վերաբերվելը արդէն յայտնի են ամբողջ աշխարհին։
Հրէայ դաւանութեան ճանապարհորդները Հիւսիսային Լլոյդի անդրատլանտեան նաւերում ստանում են ծիսական կերակուր, որ գտնվում է Բրէմէնի ռաբբիի հսկողութեան տակ։ Բացի դրանից հրէայ ճանապարհորդների համար Բրէմէնում կայ յատուկ հիւրանոց (Stadt Warschau) ծիսական կերակրով, սինագօգով և ընթերցարանով։
Բացատրութիւններ տրվում են բոլոր լիզուներով։ Տեղեկութիւններով դիմել հետևեալ հասցէով.
ԳԵՐՄԱՆԻԱ, ԲՐԷՄԷՆ.
Հիւսիս-գերմանական Լլոյդ
(Bremen, Norddeutscher Lloyd)
7—2

Զգուշացէք կեղծումներից
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԵՆՍԻ
Պեպինների, սեւութեան, դեղին բծերի, պուդիկների և պտուկների դէմ։ Անուշահոտ տուալէտային սապօն բարձր արժանաւորութեան։ Ծախվում է ամեն տեղ 1 կտորը 50 կոպ., 1/2 կտորը 30 կոպ.։ Ոսկէ մէդալ, Լօնդոն, 1893 թի համար։ Գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկվայում։
(14,29) 25—12

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Օլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—25

Թիֆլիսից Ռուսաստան մեկնելու պատճառով, աչքի ընկնող և քաղաքավարդ տեղում գտնվող
ՄՕՍԿՎԱ
ՏՐԱԿՏԻՐ
տրվում է կապալով
նպաստաւոր պայմաններով, լիակատար սարք ու կարգով։ Կարելի է և առանց վերջինի։
Նոյն տեղում տրվում է վարձով 4 սենեակ և ծախվում են վիէննական արդ ու զարդ, սեղաններ, թէյի և ճաշի ամանեղէն։
Հասցէ. Солдатскій базаръ, рядомъ съ православной семинаріей.
(ու. շ.) 2—2

Առաջին Կովկասեան Պահեստ
ՍԵՐՄԵՐԻ
ԼԱՐՇԷ
Գոյութիւն ունի 1872 թուից
№ 23, Միխայլովսկի պր., № 23
առաջարկում է
ՍԵՐՄԵՐ
ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿ
բանջարանոցի
ծաղիկների
խոտերի
ծառերի
ՄԱՍԻՆ
Ցայսնի ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ Բազդադի։ Տուփիգինն է—6 մսխալը—2 բուբլի։ Գումարով գնողներին զեղչ։
(ա. օ.) 10—6

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. դեղագործն.երի։—Ռուսաստանում թոյլատրված։
ՄԱՏԻԿՕԻ ՍՐՍԿՈՒՄ
Զգուշացէք կեղծումներից
Երկարամեայ և բազմաքանակ աջողութիւնները ապահովում են, որ նա կատուկ կերպով գործում է պիբելոյի (հնօրէյ) ժամանակ։ Կարճ ժամանակամիջոցում ՄԱՏԻԿՕՆ բժշկում է ամենայարատև արտահոսութիւնը։
ՊԱՀԵՍՏԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ
(15 և 30) 14—9

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕԾԿԵԶԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՍԵՒԱՆՈՒԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կնիքն ունի իր վրա։
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ ՐԻԳԱՅՈՒՄ ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ ՕԴԵՍՍԱՅՈՒՄ ՐՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՏԱՇԿԵՆՏՈՒՄ
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԼՕՅԴՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ
ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
(հ. կ.) 100—1

Типографія „Экономія“ Авака Мугдусіанопова съ С-ми.